

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՄՆ ԵՒ ՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻՆԿԱՅ 1883 ԹԻՒՆ

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով:

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐԻՈՒԹԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՅՈՒՅԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիտօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերէն, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 րուբլ, վեց ամսվայ 6 րուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 րուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ: ՀԱՍՑԷՆ: Тифлисс, редакция «Мшак»

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՐՈՐ ԱՐՅՈՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Մօզգօկից: Նամակ Ախալցխայից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «ГОЛОСЪ» լրագրի յօդուածը Թիւրքիայի մասին: Ներքին լուրեր: Արտաքին լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՀՅՈՒՅԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նամակ Ախալցխայից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕԶԴՕԿԻՑ

Նոյեմբերի 18-ին

Այսօր այն օրից, երբ որ սկսվեցան հիմնվել մեղանում, հայերի մէջ զանազան բարեփոխական ընկերութիւններ, Մօզգօկում եւ՝ եթէ ոչ մեծ մասը տեղական հայերի, գոնէ քանի մի անձինք մտադրվեցան հետեւել իրանց ազգակիցների բարի օրինակներին, բայց զժողովրդաբար չը աջողվեցաւ նրանց այդ բանը: Վերջապէս քանի որ հետզհետէ սկսեց աւելանալ բարեփոխական ընկերութիւնները:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆԿԱՅ

Նոյեմբերի 1-ին

Անձնական գործերս ստիպեցին ինձ գնալ Ախալքալաք: Ախալքալաք մի ժամանակ Տայոց նահանգի առանձնիքն էր, մինչ էր և կրում էր բոլոր առանձն, իր նշանաւոր բերդի պատճառով, որը կառուցված էր նորա համար, որ Տայոց գաւառը և շրջակայ գիւղերը պաշտպանէր Ջաւախէթից արեւմտեղ թշնամիներից: Յետոյ վրացիք տիրելով այս աւանին, վերանորոգեցին բերդը, որտեղ մինչ էր այժմ երևում են հայ յիշատակարանի մնացորդները, միացրին Ջաւախէթ գաւառի հետ և առանձնեցին Ախալքալաք այն է՝ նոր-ախալքալաք—քաղաք:

Նախ քան վրացիների Ախալքալաքի տիրելը ընկնում էին այդտեղ հայեր, ինչպէս վկայում են գերեզմանաքարերը. բնիկների վրա աւելացել է և մի անշան մասն գաղթականների, որոնք հին Հայաստանից Անի քաղաքի աւերման ժամանակ անցան Ախալքալաքի վրայով Լեհաստան և Մօզգօկ: Այդ բնիկների և գաղթականների մի անշան մասն էլ ընկնում են Բաւլէթ, Վաղիան և Մերենիա գիւղերում: Մերենիա կոչվում է այն

Ներկայ գտնվողները խօսք բաց արին ժողով կայացնելու կամ յետաձգելու վերաբերութեամբ. ձայների մեծամասնութիւնը պնդում էր, որ բոլորովին ուշադրութիւն չը դարձնեն ժողովի անդամների սակաւաթիւ լինելուն և անպատճառ կայացնեն առաջին ընդհանուր ժողովը, իսկ մի քանի հոգի աւելի օգտաւէտ էին համարում յետաձգել ժողովը և կայացնել ու վաւերական համարել այն ժամանակ միայն, երբ կը ներկայանայ անդամների մեծ մասը: Նրկար խօսակցութիւնից յետոյ, վերջապէս ընդհանուր համաձայնութեամբ վճռեցին անպատճառ այս անգամ բաւականանալ սակաւաթիւ անդամներով և կայացնել ժողովը:

Ընտրվեցաւ իւրեւ ժամանակաւոր նախագահ հ. Գաբրիէլ քահանայ Տուրքալեանցը, որը մի կարծիք ու ազդու առնչութեամբ ընկերութեանը բացեց առաջին ընդհանուր ժողովը Բարեգործական ընկերութեան անդամների: Յետոյ բոլորեցան վճռեցին միաձայն հաւանութեամբ կազմել Մօզգօկում մի Բարեգործական ընկերութիւն, որը լինէր մի ճիւղ Թիֆլիսի ընկերութեան և գտնուէր նրա հովանաւորութեան տակ: Ժողովը անդամները դարձին ջրէկարկութեամբ ընտրեցին իրանցից եօթը հոգուց բաղկացած մասնաժողով, որին յանձնեցին մշակել մի կանոնադրութիւն, առաջարկել ընդհանուր ժողովին և ապա ուղարկել Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան:

Գեղեցիկ ձեւաւարկութիւն, հիմնաւի նպատակ և նախանձնել գործ է,—այդ ամենը կատարեց, երբ որ բանը հասնում է ասածների կատարելուն, այն ժամանակ Վալէք դիւ հրաժարեալ ասելով, հարկւր երեսուն հոգուց միայն երեսուն և վեց հոգի ուղղում են զանազալ քայլերը զեպի ժողովարանը: Ոչինչ, դարձեալ չը պէտք է յուսահատվին այս ընկերութեան հիմնադրու պարունը և նրան աջակցողները, որովհետեւ մեղանում առհասարակ ամեն բան այդպէս է.— ինչպէս որ շուտ տաքանում ենք, նոյնպէս և շուտ սառնում ենք:

Թէ այսպէս և թէ այնպէս, առ ի սրտէ ցանկանում ենք յաջող ընթանալ Մօզգօկի հասարակութեան սկսած գովելի գործին և յարատեւութիւն նրանց ազգօգուտ ընկերութեան:

Հրկայը—մովսիսականներ թուով 12 և երբեմն 14 տուն են. պարագում են վաճառականութեամբ:

Հայերը, որոնք թուով 600 տուն են, այն դարձեալ կալանութեան մի մասն են, որ 1829 թուականին կարագետ արքեպիսկոպոս Բաղրատունու առաջնորդութեամբ գաղթեցին Հայաստանի կենտրոնից: Այդ 90,000 գաղթականութեան մի մասը զեւտեղված է Ախալքալաքի և Շալվայի գաւառների գիւղերում, որոնք այժմ աճելով հասել են 40,000 տան, ինչպէս երևում է վերջի տարիների վիճակագրական տեղեկութիւններից: Նրբ անցնում են գիւղից գիւղ, լուռ և հայոց բարբառը ամենի բերանից, ժողովրդական երգերը, որ կախկիւն է երգում գիւղացին, իր որդոց և ընտանեաց հետ: Այստեղ ամեն ամիս ժողովուրդը ստեղծագործում է երգեր, հանելուկներ, հեքիաթներ և այլն: Յաւուր սրտի պէտք է ասել, որ միւր բանասէրները չեն հետաքրքրվում այս գաւառով, որտեղ գետեղված է հայոց այն տարրը, որ ընդունակ է տուրքն աշխատութեան, և որի վրա անկողնի մնացել են հայի ամեն առանձնայատկութիւնները, և ինքնուրոյնութիւնները:

Ախալքալաք գաւառի հայերը պարագում են երկրադործութեամբ և արհեստներով, զիւստօրապէս կաշուէրգործութեամբ, մետաքսագործութեամբ, պղնձագործութեամբ, դարբնութեամբ և այլն. այս արհեստների արտադրութիւնը զիւստօրաբար գործածվում է նոյն իսկ նահանգում:

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆԿԱՅ

Նոյեմբերի 22-ին

Սրանից երկու ամիս առաջ, տեղիս հայ-արհեստաւոր դասը խնդր ներկայացրեց ուսումնարանների հոգաբարձութեանը կիրակնօրեայ վարժարանի մասին հաստատու մարդկանց համար. հոգաբարձութիւնը յայտ առեց իրագործել նրանց ցանկութիւնը, և իր կողմից հրահանգներ խնդրեց թեմական վերատեսչից: Սահում են ամիսներ, դեռ ոչինչ պատասխան կամ հրահանգ ստացված չեն. իսկ ուսումնական խնդրատուները՝ որոնք անհամբեր սպասում էին յիշեալ վարժարանի բացվելուն, բողոքեցին այդ լուրի վրա: Հոգաբարձութիւնը նրանց հաշուով և պատասխանի վճարով հեռացրեց պ. Բարխուդարեանցին, բայց պ. վերատեսուչ հեռագրին պատասխանելու պատիւը չարտւ: Ճշմարիտն ասած, այդպիսի վարմունքը յուսահատութիւն է պատճառում և դալորութ. մի քանի անգամ լրագրեցում կարդացած եմ, որ պ. Բարխուդարեանցը թող է և անյարմար իր պաշտօնում. դուցէ նա լու ուսումնական է, Շիլլերի «Թարգման» նոգ է, բայց թեմական վերատեսչութեան պաշտօնում չատ թերի. օրինակ, այս տարի մեր ուսումնարանները աւելորդ երկու ամիս քոց մնացին, ուսուցչաց շտապները վաղօրեք կազմած չը լինելուն համար, որով այդ երկու ամիսում մեր մանուկները թէ զրկվեցան ուսումից և թէ պարագ մանդալով անկարգ կեանք անցկացրին. երկրորդ պ. վերատեսուչը մեր ուսումնարաններում կրկին այն ուսուցչները նշանակեց, որոնք դէմ անցեալ տարում շատ բողոքներ զրկեցին լրագրեցի մէջ: Ներկայ ուսուցչական խմբի մէջ բացառութիւն են կազմում որ պ. Ալիսաղեանց, Աւագեանց, Յակոբեանց և հայր Վաղարշեանց, որոց բարեխիղճ պաշտօնավարութեան համար լսել եմ աշակերտներից և աշակերտուհիներից անթիւ շնորհակալութիւններ: Պ. Բարխուդարեանցը արդեօք քննել էր միւս ուսուցչներին արժանաւորութիւնները, իմ կարծիքով, միւր կարող է լինել լու ուսումնաւոր, լու մարդ, բայց վատ ուսուցիչ, որովհետեւ ուսուցչութիւն անելու համար պէտք է որ նա զիտնայ դասաւանդելու ձեւը, աշակերտաց հետ վարվելու կերպը, իր առաքելի, կենդանի օրինակներով. և վերջապէս պ. Բարխուդարեանցը իր թեմական վերատեսչութեան օրերում, արդեօք քանի անգամ այցելած է մեր ուսումնարաններին և ի մօտոյ

վաճառականութեամբ պարագում է հայ աղ-գաւառականութեան մեծ մասը: Չարկութիւնն էլ քիչ է տարածված այս քաղաքի շրջակայ գիւղերում: Մի վարակիչ և վնասակար ախտ, որ տարածված է այս քաղաքի կապիտալիստների մէջ, այդ է, որ գիւղացոց տալիս են մեծ մեծ տոկոսով փող և յետոյ տարուց տարի խլում են նոցանից տարվայ աշխատութեան մեծագոյն մասը, և այսպիսով խեղճ գիւղացիք յաւիտեականապէս չեն աղատվում այդ կապիտալիստների ճիրաններից: Այս էլ առաջանում է ժողովուրդի տղիտղիւնից: Երբ աշխատեցը հասկացնել ժողովուրդին իր բաւին ու չարք, այն ժամանակ այսպիսի երեւոյթներ չեն յառաջանայ:

Քիչ չեն նպաստում այդ կապիտալիստներին տղէտ գրաւիւնները, որոնք վերին ատմիւնի անխիղճ մարդիկ են: Մի քանի բուրդի ձեռք բերելու համար, ամեն անաղնութիւն ի գործ են դրնում. միշտ աշխատում են ժողովուրդի մէջ խռովութիւններ յարուցանել: Նրանք ատվում են համայնքից:

Ախալքալաքում կայ մի հայոց եկեղեցի սուրբ Խաչի անունով, որտեղ ժամերգութիւնը անհամատ լաւ է մեր Թիֆլիսի բոլոր եկեղեցիների ժամասացութիւնից: Մի եկեղեցու տեղ էլ կայ, որ պէտք է կառուցանէ Գովհանէս Տէր-Վիրապոսեանը, համաձայն իր հօր Գրիգորի կտակին: Սուրբ Խաչի գաւառում գտնվում է հայոց սուրբ

ճանօթացած նրանց կարիքներին: Ուսուցիչները մեծ մասը, առհասարակ, բաւականաւոր են միմիայն ուսնելի ստանալով: Որովհետեւ ներկայիս մեր ամենապարզիկ առարկան, ուսումնարաններն են, ուստի յուսամ ոչ ոք ինձ մեղադրելու չէ պարզան պարզ և անկեղծօրէն գրելու համար:

Լսում ենք, որ տեղական երկրաստորութիւնը մեր տաղիր է մի քանի ներկայացումներ տալու յօգուտ թաղական ուսումնարանաց: Մեր ուսումնարանաց տեսուչ պ. Ալեքսանդրեան աշխատում է մեծ և փոքր Պաման, Օրաւ և Սաղէ գիւղերի մէջ մի կենտրոնական-ծխական ուսումնարան բաց անելու համար. այդ հայաբնակ գիւղերը շատ մօտ են միմեանց. պ. տեսուչը մի քանի անգամ այցելած է յիշեալ գիւղերը. գիւղացիք համաձայն են. հաւանական է որ ուսումնարանը հիմնովի փոքր-Պամանում, կամ Սաղէում (Սաղէում չիմութիւնը պատրաստ է): Հայոց Բարեգործական ընկերութեան մասնաճիւղը այստեղ հաստատելու համար խորհրդածութիւններ լինում են առանձին, որոց մասին յոյս կայ մօտ օրերումս հրապարակական ժողով կազմելու:

Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ պատմում են որ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը շատ անգամ խստութեամբ է վարվում աշակերտներին հետ, առանց քննելու թէ աշակերտը շատ անգամ երբ վատ է սովորում, արդեւ զա ծուրութիւնից, անընդունակութիւնից, թէ այլ որ և է պատճառից է լինում: Օրինակի համար լինում են հետեւեալ դէպքեր: Մի աշակերտ որ շատ ընդունակ է և անչափ աշխատասէր է, այնու ամենայնիւ ուսման մէջ առաջադիմութիւն չէ անում: Նրան կամ պատժում են դպրոցում, կամ նոյն իսկ արտուրում են դպրոցից: Բայց վերջը յայտնվում է որ աշակերտը այն պատճառով լաւ չէ պատրաստում իր դասերը և ուսման մէջ ոչինչ առաջադիմութիւն չէ անում, որ խեղճը, պատկանելով մի շատ չքաւոր ընտանիքի, դասերից յետոյ ամբողջ օրը ստիպված է տան անտեսութեամբ պարապել, հոգալ իր փոքրիկ եղբայրների և քրոջերի մասին, քանի որ ընտանիքի հայրը վաղուց վախճանված է, իսկ մայրը տկար է: Այդպիսով ողորմելի աշակերտը, դասերը վերջացնելուց յետոյ, տան մէջ հօր, մօր, տան անտեսի և նոյն իսկ ծառայի պաշտօն է կատարում: Այսպիսով նա ժամանակ չունի դասեր պատրաստել, իսկ դպրոցի վարչութիւնը նրան պատժում է որպէս ծուլ աշակերտի:

Նոնիսիս մեզ գրում են: «Այս տարի Նուբու ուսումնարանը ունի վարժապետների մի լաւ խումբ, որ արիւթեամբ գործ է տեսնում: Անցեալ տարի ունէինք 105 աշակերտներ մեր դպրոցում, իսկ այս տարի 160 աշակերտներ: Անցեալ տարի ունէինք 30 աշակերտուհիներ, իսկ

Մերովրեան ուսումնարանը, որի հանդէպ նոյն դաթում զետեղված է ուսաց տարրական երկդասարանեայ ուսումնարանը: Մերովրեան ուսումնարանի տեսուչը բացառաւ էր. ինչպէս ինձ պատմեցին ուսումնական ժողովին էլ ներկայ չէ եղել: Ինչ է նշանակում չը ներկայանալ ուսուցչական ժողովին. դոնէ կարելի էր օգտվել այդ ժողովից և մտցնել արդի մանկավարժական պահանջներին յարմար կարգ ու կանոններ այս ուսումնարանում: Ուսուցիչները խումբը, որ կազմված է տեղական ոյժերից, չը նայելով ամեն տեսակ արգելքներին, բարեխղճաբար է պարապում: Ուսումնարանի խորհուրդ չիմութիւնը, հոգից ծածկված կտուրը, դասատանց փոքրութիւնը և անյարմար լուսավորութիւնը, չին ձեռն նստարանները, աշակերտաց և դասատան անմարդութիւնը ոչ սակաւ վնասում են աշակերտներին ֆիզիկական դարձում: Ուսուցչաց ուղարկութիւնը հրաւիրում են բժշկապետ Աւետիք Բարսեղեանի ուսումնարանական առողջարանական գրքի վրա: Եթէ այսպիսի հրատարակութիւններից ուսուցիչները և ուսումնարանական վարչութիւնները չեն օգտվում, էլ ուսումնարանը կարող է լինել համար հեղինակները իրանց սակի ժամեր են գտնում այդ տեսակ զրբեր յօրինելով:

Այցելեցի նոյնպէս օրերողական ուսումնարանը, որ նոյն տպաւորութիւնը գործեց վրաս, ինչ որ արական ուսումնարանը. ձեռագործը այս

այս տարի 45 հոգի: Անցեալ տարւոյ վարժուհիները ազատ կամքով հրաժարվեցաւ իր պաշտօնից և այժմ նրա տեղը նորին է նշանակված:»

ԲԱՐՈՒՅՑ մի հայա-աւետարանական երկրաստորութիւնը մեզ հետեւեալ: «Ձեր պատական լրագրի անցեալ համարներից միում կարդացի Շամախուց գրած մի նկատողութիւն, որի մէջ լրատուն աւսում է թէ հայա-աւետարանականների նոր սերունդը մտաւորապէս բաւական դարձացած է, իսկ չինը դեռ խոր տղիտութեան մէջ է և պաշարված է այլ և այլ ձեռնադաշտութիւններով: Պ. լրատունի կը պատասխանեմ այսպէս: Մենք նոր սերունդը լինելով, ամեն կերպ պէտք է աշխատենք որոտով և գործով մօտենալ մեր կրօնաբանական արիւնատիկների: Այդ մեր սուրբ պարտքը պէտք է լինի, իբրեւ դարձացած հայ երկրաստորութիւն: Եւ այդ պէտք է անենք մենք գործով և ոչ թէ լոկ խօսքով: Գրանով, բացի մեր պարտքը կատարելուց, օրինակ ցոյց տուած իր լինելը և չին սերունդին: Բայց, ցանկով պէտք է ասեմ, որ մեր նոր սերունդը շատ անգամ այդ ուղղութիւնը հակառակ է գործում: Այս մի օրինակ: Մենք Շամախում ունենք բաւական հարուստ գրադարան, որի հինքը դեռ են հայա-ուսուրչականները, բայց միւս զանազան շատ մասնակցողներ կային և այժմ էլ կան: Պէտք է ասած որ մեր Բագրուկ դարձաւ ոչինչ չարժէ, համեմատելով Շամախու ձոխ գրադարանի հետ: Եւ այդ պատճառով հարցնում եմ. ինչը ստիպեց մեր շամախեցի երկրաստորութիւն առեւցիցը շատերին դէպի այդ գրադարանը և աշխատել կազմել նորը, հայա-ուսուրչականները ջուր: Միթէ մի և նոյն դրբերը, լրագրիները չը պէտք է ստանանք, երբ արդէն կան և ըստացվում են առաջիկա գրադարանում: Ինչի էք դուք գրգռում մոլեռանդութիւնը. միթէ ուղիւմ էք հետեւել այն խառնաբաններին, որոնք հայա-ուսուրչականների մոլեռանդութիւնը. ձեռք դնում են դրգռում: Եթէ նրանք այդ անում են, այդ չէ նշանակում որ դուք նոյնը պէտք է անէք: Ընդհակառակը դուք պէտք է ցոյց տաք որ դուք նրանց օրինակին ամենակին հետեւել չէք կամում: Միթէ դա, այդ մոլեռանդութիւնը, պէտք է լինի նոր սերունդը կազմող հայա-երկրաստորութիւնի դարձաւարը:»

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏԻՑ մեզ հաղորդում են: «Նոյեմբերի 2-ին այգուտեղ հասած 30 հոգուց բաղկացած տաճկաստանցի հայ աշակերտների խումբը, Վեհափառի և Մանկունու հրամանով ընդունվեցան ձեռնարանում: Բայց կողմաստան հայ մանուկներից բազմութիւնը չեն ընդունվում ձեռնարանում, տեղ չը լինելու պատճառով:»

Մեզ հաղորդում են ՂԱՐՔԱՍՏԻՑ հետեւեալ: «Աւագուրթիւնը Ղուբայի գաւառում սովորականից քաջացած կարելի է համարել: Ուսուցիչները թիւնը ամեն միջոց է գործ դնում ունչացնելու:

ուսումնարանում շատ դանդաղ քայլեր է անում, ինչպէս և նկատեցի ներկայ գտնվելով այդ դասի աւանդման: Իմ կարծիքով լաւ կը լինէր եթէ մեր գաւառացի բոլոր վարժուհիք զման գոն 6 ամիս ժամանակով թիֆլիս և այնտեղ մասնագէտ ուսուցիչ Գրիգոր Անանյանի մօտ սովորեն այդ արհեստի աւանդման աւելի նոր և կատարելագործված մեթոդը սորանով մի անգամից կազատվեն մեր ուսումնարանները չին ու անպէտք ձեռագործի դասաւանդութիւնից, որը փոխանակ արթնացնելու սանկիներով մէջ հետաքրքրութիւն, միանգամայն ընդ միշտ անընդունակ է դարձնում նոցա այդ կենսական առարկայում առաջադիմելու: Մի լուր շատ վշտացրեց ինձ. ուսումնական տարվայ հէնց սկզբում փակվեցաւ օրերողական ուսումնարանի բարձր դասատունը: Փոխանակ դասատունը բացվելու, փակվում են փոխանակ բազմաթիւ, ուսումնարանաց թիւը պակասում է այս թիւում: Աւագ Գահանայ Տէր-Ստեփան Տէր-Ստեփանեանցի և Յակոբ Տէր-Յովհաննիսեանցի թիւական վերատեսչութեան ժամանակ բացված ուսումնարանները փակվում են. պատճառ, որ Գեորգ Բարսեղեանցը տարիներով չէ այցելում Ախալքալաքի ուսումնարանները: Բայց չայցելելուց յարգելի թիւական վերատեսուչը իր օգնական նշանակել է մի անձն, որ ամենեկին անընդունակ է ուսումնարանական գործում. ասածիս ապացոյցներ ունեմ: Մի տա-

ղաւ զննելիս: Իշխանութեան հրամանով դաւադները խմբի մի մասը բռնված և հրացանաձիգ եղած է, միւսը բանտում կալանաւորված է: Մնացածները երկուրից հանգիստ են մնում, նրանցից մի քանիսն են էլ իրանք անձնատուր են լինում իշխանութեանը: Ժողովուրդն էլ, երբ աւագակներին հանդիպում է, հրացան է դնում նրանց վրա. գիւղացիները դրանով սիրտ առան: Հին պօլիցիակները մնացել է միայն պ. Հասան-Բէգով: Սա ժամանակաւոր գաւառական պաշտօն է կատարում: Բայց քանի մի օր է, որան էլ տեղափոխեցին Գեօկչայ, իսկ նրա տեղը եկած է պ. Մաղաթ: Սրա գալու օրից Ալիան գիւղում կալանաւորվեցան չորս հոգի աւագակներից: Բայց նոյեմբերի 10-ին, երբ կատարվում էր թուրքերի շախսէն, չորս դաւաղ, կանանց չորեքով միտնում են քաղաք, այս հանդիսին նայելու Պ. Մաղաթ, տեղեկանալով այդ մասին, գիւղերը 500 զինուորներով շրջապատում է այն թաղը, ուր գտնվում են եղել դաւաղները, որպէս զի բռնէ նրանց: Բայց սրանք զոչաշանալով վաղօրօք, անյայտանում են:»

ՈՒՖԱՍՏԻՑ մի պարոն հարցնում է մեզ թէ արտեղից կարող է ստանալ պ. Գիւրգենեանի Անի աւերակների Փօտօգրաֆիական ժողովածուն: Գրքան մենք կը պատասխանենք որ ինքն պ. Գիւրգենեան զեռն ևս արտասանմանում է, իսկ մենք ժամանակի պակասութեան պատճառով չենք յանձն առնում փոստով ուղարկելու պարոնի ժողովածուն այլ քաղաքները, թէ և խմբագրատանը ունենք այդ ժողովածուի մի քանի օրինակներ: Առեւել կամեցողը կարող է գիւղ մեր խումբագրատան և ինքն զինել մեզ մօտ, կամ մի ծանօթին յանձնել այդ գործը, բայց ուրիշ քաղաքներ փոստով ուղարկելը մենք չենք յանձն առնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«ԴՈՒՍԵՐ» ԼՐԱԳՐԻ ՅՈՒՈՒՄԸ ԹԻՒՐԻՍԻՍԻՆ ՄԱՍԻՆ

Թարգմանում ենք այստեղ ուսաց «Գոլա» լրագրի յօդուածը Թիւրքիայի այժմեան դրութեան մասին:

Կ. Պօլսից մեզ հասնող քաղաքական լուրերը ժամանակ առ ժամանակ յիշեցնում են Եւրօպային, որ Բերլինի դաշնագիրը թողեց արեւելքում բազմաթիւ առիթներ տարախուսանքների, այդ դաշնագրի գրեթէ բոլոր յօդուածների վերաբերութեամբ, դաշնագրի, որ տեսականապէս պէտք է ապա-

րի է, որ փակված է բազմամարդ կարգաւ դիւղի կարագետեան ուսումնարանը, որի ուսուցչի վարձը չէ վճարել թիւական վերատեսչի օգնական Խորէն Աւագ քահանայ Բարսեղեանցը: Այս մասին թիւական վերատեսչին յայտարարութիւն է տրուել կարգաւ դիւղի ուսուցիչը. բայց մինչև այժմ անօրէնութիւն չէ արել թիւն, վերատեսուչը: Գիւմպարտայի դիւղի ուսուցչի վարձն էլ չէ վճարել հայր Բարսեղեանցը, այս մասին էլ ծանուցված է պ. Բարսեղեանցին. բայց նա լուր է:

Արաբիայի դիւղի ուսումնարանն էլ փակել է հայր Խորէնը: Ո՞ր միշտ թւում: Աղաւթեթ դիւղի ուսումնարանն էլ շուտով կը փակվի: Բայց ուրիշ կողմից այդ կողմերում բացվում են տեղութեան տարրական ուսումնարաններ, որոնք նոյնպէս կառավարվում են ժողովրդի գրամիտներով: Աշակերտների մեծ մասն էլ հայեր են. բայց զարմանալի է որ այդտեղ նշանակվում են վիրախօս ուսուցիչներ, որոց լեզուն չեն հասկանում Ախալքալաքի դիւղերի հայ տղաքը: Այս գաւառում չէ թէ հայերը միայն հայերն են խօսում, այլ և թիւրքերն են: Վերեւ յիշված ուսուցիչը ցոյց տուեց ինձ մի քանի (սեւագրութիւններ) պատճեններով, որոնցով դիւղի է հայր Խորէնին (Թեմ. վեր. օգն.) բայց նա անպատասխան է թողել այդ բոլոր կարերը թիւրքերի պահանջները: Սրա մասին առանձին արբունական սուրհանդակով ուղարկել է իր խոնարհ ինդիքը այս մասին, որ անպատասխան է մնա-

հոլացնէր Օսմանեան պետութեան դրութեանը իր այժմեան նոր սահմաններում: Չորս տարի է անցել այն ժամանակից, երբ դիւլումատիան որոշեց այդ սահմանները և ամենքը արդէն համոզվեցան որ այդ սահմանները անհաստատ են: Արեւելեան Բուսիլայի միանալը Բօլքարական իշխանութեան հետ ժամանակի հարց է: Աւստրիական շարժումը դէպի Էգէեան ծովը միայն յետաձգված է: Թիւրքաց Հայաստանը միայն ժամանակաւորապէս է մնում իր այժմեան դրութեան մէջ: Ոչ ոք անհնարին չէ համարում Յունաստանի սահմանների հետեւ հեռէ լայնանալը:

Բ. Գուռը, կարծես, դիտմամբ առիթ է տալիս այդ տեսակ ենթադրութիւնների իր անթիւ յետաձգութեանը, որոնց միջոցով թիւրքաց դիւանագիտութիւնը մինչև այժմ որքան հնար է իրան, խուսափում է իր յանձն առած պարտաւորութիւնների կատարելուց: Թիւրքաց կառավարութիւնը մինչև այժմ չէ մտցնում իր խոստացած Բուսիլայի շրջանում Հայաստանում, շատ ժամանակ չէ նա վէճ ունէր Յունաստանի հետ հոգի մի աննշան կտորի համար, որի առիթով քիչ էր մնում ծանր ընդհարում չը պատահեց յոյների և թիւրքերի մէջ: Գէպի Արեւելեան Բուսիլային Կ. Պօլսի կառավարութիւնը այն աստիճան վատ է տրամադրված, որ դրանով աւելի է գրգռում Բուսիլայի բնակիչներին մէջ ցանկութիւնը միանալ Բօլքարական իշխանութեան հետ: Մինչև անգամ Զէնթօօրիայի հետ Բ. Գուռը չէ վերջացրել մինչև այժմ թիւրք-չէրիօօրիական սահմանը որոշելու ամենահասարակ գործը: Բայց այս բօլսիս այդ բոլորը աննկատելի է անցնում Եւրօպայում: Եւրօպան աւելի ծանր, աւելի նշանաւոր հարցով է զբաղված, այն է Եգիպտոսի հարցով, հասկանալով որ Եգիպտոսի անգլիացիների ձեռքը անցնելուց յետոյ, անտարակոյս կը փոխվեն եւրօպական պետութիւնների այս կամ այն փոխադարձ յարաբերութիւններն ու նրանց փոխադարձ շահերը արեւելքում: Թիւրքիային արդէն համարում են հարցի մէջ շահ չունեցող անձնատուրութիւն:

Բայց շատ կարելի է որ Թիւրքիայի այժմեան դրութիւնը կը ծնեցնի այնպիսի իրօնութիւններ, որոնք կը շփոթեն դիւլումատները բոլոր պլանները: Բաղկանեան թերաւկզու վրա ամեն բան հանգիստ չէ: Գրե-

ցել: Մենք չենք իմանում ինչ է նշանակում յանձն առնել պարտաւորութիւն և չը կատարել բարեխղճաբար:

Մի նշանաւոր անցք որ ինձ պատմեցին: Թեմական վերատեսչի օգնական հայր Խորէն Բարսեղեանցը ուսուցչական ժողովի հէնց սկսվելուն պէս անողեց Ախալքալաքի և Դիւղիայի գաւառներում այսպէս ասված երեսակայական ուսումնարաններ (ինչպէս որ տարրական ծանօթութիւն տուած ժամանակ է անում), որոց համար ձարեց ուսուցիչներ—տիրացուներ և սոցա ցուցակը ուղարկեց կարգադրի յանձնաժողովին, որպէս ուսուցիչների, որոնք տոպան կարգադրի յանձնաժողովից ամենայն տեսակ նպաստ: Միթէ անարդարութիւն չէ մտրեցնել թէ հաստատութեան և թէ կարգադրի յանձնաժողովին. այս արդէն յայտնի է կարգադրի յանձնաժողովի անդամներին, և յուսով եմ, որ լուրւո չեն այս գործի մասին: Հայր Խորէնի ուղարկվածները արդէն ցոյց տուեցին իրանց չնորճ կարգադրի յանձնաժողովին:

Վերջացնելով խօսքս հրաւիրում եմ նախ թեմական վերատեսչի և հոգեւոր իշխանութեան ուղարկութիւնը, և ապա մեր բանասէրները ուղարկութիւնը, որ անտես չառնեն այս բազմապիսի հայախօս վիճակը:

գոհութիւնը աւելի և աւելի է երևան գալիս և շատ կարելի է, որ մինչև որ զիպլումատիոն զբաղված կը լինի ամենավերջին քաղաքական անցքերի քննադատութեամբ, այնպիսի անսպասելի իրողութիւններ կը կատարվեն, որոնք կը ստիպեն մասնակցել Բերլինի դաշնագրի անկատարելութիւններին մասին: Գուցէ աւելի լաւ և խելացի կը լինէր անմիջապէս նորից վերաքննել այդ միջադպարի դաշնագրի յօդուածները: Այդ վերաքննութեան համար պատրուակ կարող է լինել եզրկտական խնդրիչ, որ անտարակոյս կապ ունի դաշնագրի յօդուածներին հետ, որոնցով ապահովվում է Յոմանեան պետութեան ամբողջութիւնը: Աւելի լաւ է ուղղակի կերպով հարց դնել դաշնագրի վերաքննութեան անհրաժեշտութեան մասին, քան թէ սպասել որ Արևելքում անցքերը կրկին խառնվեն և տեղի տան եւրոպական մեծ պետութիւնների փառասիրութեան և շահերի փոխադարձ ընդհարումներին:

ԵՊԻՊՏՈՍ

Կայրէից „Politische Correspondenz“ լրագրին գրում են նոյեմբերի 15-ից: Լորդ Դեօֆֆերին արդէն արաւ անհրաժեշտ այցելութիւնները եզրկտական բարձրաստիճան անձանց և նրանցից էլ ստացաւ փոխադարձ այցելութիւններ: Նա ժամանակաւորապէս իջաւ Կաթէլ-Նուսսա պալատի մէջ, որտեղ բնակվում էր Կոնստանտին Գուքար, բայց յետոյ տեղափոխվեցաւ բանկիր Կատտանիի շքեղ տունը, որ լորդ Դեօֆֆերինի ձեռքին կը լինի, քանի որ նա կը մնայ Կայրէի մէջ: Մի քանի օր առաջ նա արդէն խորհրդակցութիւններ սկսեց իւրաքանչիւր մինիստրի հետ առանձնապէս և զիւսուրապէս արտաքին գործերի և Ֆինանսների մինիստրների օգնականների հետ, որոնք վաղուց վարելով իրանց պաշտօնները իրանց գլխավորներից աւելի հմուտ են: Լորդ Դեօֆֆերին իւրաքանչիւր դէպքից օգուտ է քաղում հաւատարմելու: Համար, որ նրան չէ տուած գաղտնի յանձնարարութիւն կառավարել Եգիպտոսը փոխարքայի պաշտօնով և որ Անգլիան ամենեւին զիտաւորութիւն չունի իւրացնել Եգիպտոսը: Նա այնքան մեծ նշանակութիւն է տալիս այդ յայտարարութիւններին, որ նրա ունեւորները չաղիւ թէ նրան հաւատ կընծայեն, մանաւանդ որ լորդ Դեօֆֆերին յայտնի է նրանց իբրեւ դաշնակցական քաղաքագետ: Ֆինանսների մինիստրի օգնականի զեկուցումից երևում է, որ ներկայ տարից մէջ 127,000 ֆունտ ստերլինգ դիֆերիտ կայ, մինչդեռ նախորդ տարիների բեւեգեաները ներկայացնում էին մօտ 400,000 ֆունտ ստերլինգ աւելորդ: Այդպիսով եզրկտական դժուարութիւնները երկրին կէս միլիոն ֆունտ ստերլինգ ֆլուս պատճառեցին: Պէտք է աւելացնել և այն, որ պատերազմական բաժնի պահեստները, բացի հրացաններից և փամփուռներից, կտտարելապէս դատարկ են և անհրաժեշտ է նորից գնել անհրաժեշտ իրերը եզրկտական զօրքերի զինաւորութեան համար: Յոյս կայ, որ Սուլթանի նոր զօրքերը աւելի լաւ կը կազմակերպվեն, քան թէ նոր պոլիցիան, որի անդամներից 90 հօգի նորերումն արձակվեցին ծառայութիւնից, որովհետեւ պոլիցիան աւելի առիթ էր տալիս երկիւղ կրել անկարգութիւնների համար, քան թէ նրանք, որոնց վրա հսկելու համար նշանակված էին այդ պոլիցիականները: Երեկ նոյեմբերի

14-ին բերին այստեղ խիստ հսկողութեան տակ Հասան-Ախաբ և Սոլիման-Գաուդ մարզապաններին և հրդեհ գնդիներին: Կառավարութիւնը 1,000 ֆունտ ստերլինգ վարձատրութիւն է նշանակել մնացած երկու չարագործներին կալանաւորելու համար: Ալէքսանդրիա չափազանց շատ մարդիկ են գալիս, որ աշխատանք են փնտռում: Կառավարութիւնը դեռ ևս ոչինչ չի արել իր կայացրել մնացածներին վարձատրելու համար և այդ պատճառով եզրկտական ազգաբնակչութեան և մանաւանդ եւրոպական ազգաբնակչութեան ստորին դասակարգերի մէջ կատարեալ աղքատութիւն է տիրում:

Ալէքսանդրիայից նոյն լրագրին հաղորդում են: Եգիպտոսի եւրոպական ազգաբնակչութեանը չափազանց անհանգստացնում են ոչ թէ քաղաքական, այլ նիւթական հոգսերը: Մանր վաճառականները և արհեստագործները, որոնք զրկվեցան իրանց աննշան կնիքից, սպրանքների պահեստներից և մինչև անգամ գործիքներից, աւելի հետաքրքրված են մնացածներին վարձատրելու հարցով, քան թէ դատաստանական գործերով դաւաճանութեան մասին և ուրիշ պղպիսի հարցերով: Այդ ողորմելիներից շատերը վարձատրութեան են սպասում, որ կարողանան նորից սկսել իրանց գործերը և կարողանան կերակրել իրանց ընտանիքը: Մինչև անգամ քանդված մեծ տների հարուստ տերերը չեն համարձակվում շինութիւն սկսել, որպէս զի գնահատութեան համար աչքի առաջ մի ապագայից լինի: Առեւտրականները օգուտ են քաղում իւրաքանչիւր աւերակ տեղից պահեստների կազմելու համար: Բայց որովհետեւ ամբողջ մնացած պատերը կարող են քանդվել, նահանգապետը հրամայել է մաքրել աւերակները: Այդպիսով հաստատ կարելի է ասել, որ առևտրի և արդիւնաբերութեան նորից դարգանալու համար անհրաժեշտ է կարելութեան չափ շուտ վերանորոգութեան հարցը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լոնդոնից հեռագրում են նոյեմբերի 17-ին: Ձինուրով ասորիականները չլքում են Գուրլինի փողոցներում: քաղաքագլուխ զօրք ժողովված է գործադնեցնում: Սրանից յետոյ պոլիցիական դատերը առանց երդուեալ դատաւորների կը քննեն:

—Հոսովից հեռագրում են նոյեմբերի 17-ին: Ռուսաց արտաքին գործերի մինիստր Գրիս հասաւ այստեղ հինգշաբթի երեկոյան: Մարտելում կալանաւորված են հոթը անիւթաւորականներ, առաւելապէս իտալացիներ: Նրանց մօտ կասկածելի թղթեր են գտնված:

—«Neue freie Presse» լրագրին Պերայից հաղորդում են, որ Ֆուրթ-Փաշա, մուֆտի Տաշլիճա, չէքեզ դրագունների դինարը և գնդապետը, և նոյնպէս պալատական թիկնապահ շատ օֆիցերներ կալանաւորված են: Նրանց մեղադրում են դաւադրութեան մէջ սուլթանի և պատերազմական մինիստրի դէմ: Քննիչ յանձնաժողովը բաղկացած է Մուհամեդ-Նեղմից, Ֆեվիդ-Փաշայից և Բազիլ-Բէյից: Բէյրամ-Աղա պաշտօնից զրկվեցաւ, որովհետեւ նա որպէս ոստիկանութեան գլխաւոր չը բացից դաւադրութիւնը: Առաջինը, ով որ յայտնեց սուլթանին դաւադրութեան մասին, պալատից հեռու է կանգնած: Այստեղ ընդհանուր կարծիք է տարածված, որ այդ բոլորը ինտրիգայի հետեւնք է և ոչ թէ դաւադրութիւն չէ արել: Հանդիսաւոր ճաշը ի պատիւ Բազիլ-Բէյի յետաձգված է անորոշ ժամանակով: Ամենքը կարծում են, որ արտաքին գործերի մինիստրութեան մէջ փոփոխութիւն լինելուց յետոյ ուրիշ փոփոխութիւններ ևս կը լինեն: Առաջին մինիստրը և Ասիի-փաշա զանազան կարծիքներ ունեն:

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Եգիպտական վերջին անցքերի պատճառով, ասում է «The Times», անգլիական մամուլի մէջ տեղափեցան մի շարք յօդուածներ եգիպտական խնդրի վերաբերութեամբ: Որպէս պատասխան այդ յօդուածների Լոնդոնի «Catholic Presbyterian» ամսագրում տպվեցաւ Լանսինգի յօդուածը: Հեղինակը ամերիկացի միսիոներ է, որը Եգիպտոսում 28 տարի է ապրել: Արաբական լեզուն լաւ գիտենալով և, որպէս միսիոներ, դիւզական ազգաբնակչութեան, այսինքն Ֆէլլախների մէջ պոտովելու բնական է, որ նա ուրիշներին աւելի միջոց ունենաւ աստիճանաբար թէ ժողովուրդը, և թէ եգիպտացիներին չըբաւատող հանգամանքները: Լանսինգը պատասխանում է, զիւսուրապէս, Գայ-սի յօդուածին, որ ապոված է «Nineteenth Century» օգոստոսի համարում: Ապացուցանելով հասարակական կեանքի, հասարակական կարծիքի և քաղաքական սկզբունքների գոյութիւնը Ֆէլլախների մօտ, նա, ի միջի այլոց, բացատրում է, որ վերջին ժամանակները Եգիպտոսում չափից դուրս բաղմացան օրական և շաբաթական լրագիրները: Լաւ կազմակերպված փաստային սխտանային շնորհիւ լրագիրները թափանցում են Եգիպտոսի աւանահեռաւոր անկիւնները: Ֆէլլախները լրագիրները կարդում են մեծ սիրով, մանաւանդ որ յաճախակի հարկերը ստիպում են նրանց զիտել, թէ երբ և որքան պէտք է վճարեն իրանք: Հասկանալի է, որ այդ գրութեան մէջ Ֆէլլախները, կամայ ակամայ, ծանօթանում են քաղաքականութեան հետ և ապա զինքներով ժողովվելով զիւսուրապէս արձարաններում կամ «ժողովարաններ» մէջ, ծիւղում են և դատում են հասարակական և պետական գործերի մասին: Հեղինակը պատմում է, որ իւրեղիւի և Արաբի-փաշայի մէջ եղած անհամաձայնութիւնից չորս ամիս առաջ ինքն գտնվում էր մի քանի հեռաւոր զիւրերում: Ամեն դասին պատկանող Ֆէլլախները դալիս էին իր մօտ և հարցնում էին քաղաքական անցքերի մասին, և ինքն խոստովանում է, որ նրանք ամեն քանի մասին աւելի շատ տեղեկութիւններ ունեն, քան թէ ինքն: Լանսինգը իր յօդուածի մեծ մասը նուիրում է կրօնական հարցին Եգիպտոսում, որի վրա անգլիական հրապարակախօսներից ոչ մէկը, նրա խօսքերով, չէ դարձրել կամ չէ կամեցել դարձնել հարկաւոր ուղադրութիւն: Նա պնդում է, որ յուսիսի 11-ի կոտորածը Ալէքսանդրիայում Փանատիկոսութեան հետեւնք է: Արաբի-փաշան, որին համարում են իրականութեան մէջ գոյութիւն չունեցող թիւրքաց կուսակցութեան պատկանող (Լանսինգի խօսքերով, Եգիպտոսում գոյութիւն ունի միայն մի եգիպտական ազգային կուսակցութիւն), որ կատարելապէս հաւանական է, որովհետեւ Արաբի-փաշայի առաջին քայլն էր թիւրքաց գինւորական մինիստրի փոխելը: Արաբի-փաշան շատ լաւ հասկանում էր, թէ ինչ անգլիական ծառայութիւն կարող է մատուցանել իր նպատակներին: Ալէքսանդրիայի ազգաբնակչութեան կրօնական ֆանատիկոսութիւնը, որ կարողանայ նախ և առաջ ընդհատել Գէրլի-Փաշայի հետ ունեցած ձանձրալի բանակցութիւնները, և երկրորդ ստիպել անգլիացիներին և Ֆրանսիացիներին ծովային ցույց անել «զոգումուք» յարուցանելու համար մահմադական աշխարհում: Այն կարծիքը, ասում է հեղինակը, որ Ալէքսանդրիայում չէ կարող կրօնական ֆանատիկոսութիւն լինել, որովհետեւ այնտեղ շատ է զօրեղ քրիստոնեաների տարրը, զանազան ազգերը խառնված են միմեանց մէջ և մահմադական կրօնի խոստովանող նուազում է արեւմուտքի հետ չլիկելու ժամանակ, կատարելապէս սկսել է: Եւ լաւ ուսումնասիրելի մահմադական կրօնական ֆանատիկոսութիւնը աւելի ևս զրգուում է քրիստոնեական սկզբունքների հետ չլիկելու ժամանակ: Եգիպտոսի 5,500,000 ազգաբնակչութիւնից 5,000,000 իսկական մահմադականներ են, որոնք քրիստոնեաների թշնամի են: Մուհամեդ-Ալիի ազգը դեռ շատ վաղուց պաշտպանում էր և խրատուսում էր օտար և եւրոպական նորամուծութիւնները Եգիպտոսում: Շատ օգտուէտ բաներ մտնելուց, և Եգիպտոսը, հեղինակի կարծիքով, շատ բանեւում դէպի լաւ փոփոխեցաւ, բայց նախապաշարմունքը և կամայականութիւնը ոչ միայն մնացին, բայց և ծաղկեցին այդ բոլոր ժամանակում: Իր ասածները ապացուցանելու համար, Լանսինգը նկարագրում է իր այցելութիւնը Կայրէում գտնվող բարձրագոյն հա-

մալսարանի, որ հիմնված է 900 տարի առաջ և ծառայում է որպէս մահմադական գիտութեան զիւսուր կենտրոն: Այնտեղ է թափվում ամեն տեղից մահմադական երիտասարդութիւնը և, 7 կամ 11 տարի մնալուց յետոյ, դուրս են գալիս հաւատարիմ մահմադականներ: Ուսանողների թիւը 12,000—16,000 հոգու է հասնում: Առաջին անգամ Լանսինգը այցելեց այդ համալսարանը 1860 թիւին երկու սիրիացի-բարեկամների հետ, որի համար մեծ դժուարութեամբ թողնուած ստացաւ Կայրէի վարչութիւնից: Ընդունված սովորութեան համեմատ, այցելունները պէտք է կօշիկները հանեն (համալսարանը սուրբ տեղ է համարվում): Սիրիացիները առաջ անցան, իսկ Լանսինգը մի փոքր յետ մնաց: Այդ ժամանակ նրա մօտից անցնում էր պրօֆէսորներէց մէկը և, չը հասկանալով, որ հեղինակը արաբերէն հասկանում է, ասեց. «Գէհ կարծեմ, նա պատեղից կենդանի չի դուրս գնայ»: Երբ, վերջապէս, բոլոր այցելուները մտան, բէկաօրը սկսեց բացատրել, բայց նրանց չըբաւատող ուսանողների խումբը սկսեց այնպիսի աղմուկ բարձրացնել, սպառնալով բաւական ազդու ձեւերով, որ նա ստիպվեցաւ վերջացնել բացատրութիւնները և խորհուրդ տալ այցելուներին կամայ հեռանալ, չը նայելով նրանց ուղեկցող պոլիցիականի վրա: Քսան տարուց յետոյ, Լանսինգը նորից այցելեց այդ համալսարանը և մեծ փոփոխութիւններ դատաւ: Բայց նրա մօտից անցնող ուսանողներից մէկը տեսնելով նրան, չը կարողացաւ համբերել և սպառնաց նրան: Համալսարանի վարչութիւնը կամեցում էր պատժել մեղաւորին, բայց Լանսինգը խնդրեց, որ ներեն նրան: Երբ նա այնտեղից դուրս եկաւ և նստում էր կառքի մէջ, այն ժամանակ ետեղից լսվում էին ուսանողների կատաղի աղաղակներ: Քրիստոնեայ չունաւ: Վերջապէս Լանսինգը մէջ հեղինակը, ի միջի այլոց, յայտնում է, որ Ֆէլլախների դրութիւնը բարձրացնելու համար հարկաւոր կը լինէր տալ նրանց հիմնաւոր կրթութիւն և քաղաքական ու հասարակական հիմնարկութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍՈՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

ԿՐԵՄՆՆՁՈՒԳ, 24 նոյեմբերի: Դնէպր սահունցով ծածկվեցաւ: Ձիւնակոյտեր կան:

ՕՐԵՆԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի: Այստեղից 130 վերստ հեռաւորութեամբ Տուրկայսկի նահանգի մէջ գտնված են նաւթային աղբիւրներ, որոնց մշակելը գարուներին կը սկսվի:

ՎՕԼՍԿ, 24 նոյեմբերի: Եղանակը տաք է: Շոգեւաւերը շարժվեցին:

ՕԴԵՍՍԱ, 25 նոյեմբերի: Ձիւնուորական դատարանը քաղաքական յանցանք գեկկերին սօցիալ-լեզափոխական և հարաւար յին ուսական բանւորների ընկերութեան անդամ լինելու համար դատապարտեց տաժանակիր աշխատանքների հանքերի մէջ տասը տարի ժամանակով:

ՓԱՐԻՑ, 24 նոյեմբերի: Սենայի մակերեղծը արաբ բարձրանում է պատգամաւորների ժողովի, դատաստանական պալատայի և «Moniteur» լրագրի տպարանի ներքնայարկերը ջրով լցված են:

ԼՕՆԴՈՆ, 24 նոյեմբերի: Արաբի-փաշա «Times» լրագրին ուղարկված նամակով շնորհակալութիւն է յայտնում Անգլիային պաշտպանութեան համար, յայտնում է, որ իր անձնական գեթադրութիւնը ազատեց Եգիպտոսը և յոյս ունի, որ Անգլիան կը վերջացնէ իր սկսած գործը:

ՍՕՖԻԱ, 25 նոյեմբերի: Ընտրութիւնները հանգիստ են անցնում: Մայրաքաղաքի մէջ իշխանի կողմնակից չափաւոր կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ:

ՊԵՇԵՏ, 24 նոյեմբերի: Պաշտօնական «Pester Lloyd», լրագիրը հեղքում է ուստրո-ունգարական զրաւոր դաշնագրի գոյութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

